ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ք.Երևան « 24 » սեպտեմբերի 2021թ.

ՀՐԱՄԱՆ № 0310-Ա

ԱՐՍԵՆ ՅՈՒՐԻԿԻ ԲՈԽՅԱՆԻՆ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ (ՊԱՇՏՈՆԻ ԾԱԾԿԱԳԻՐ՝ 41-27.1-Մ1-5) ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 16-րդ մասով, 16-րդ հոդվածի 4-րդ մասով, 17-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի «Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը սահմանելու մասին» N 1554-Ն որոշման հավելվածի 147-րդ, 151-րդ կետերը, Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 12-ի N 441-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 7-րդ կետը, ինչպես նաև Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի հայտարարագրերի վերլուծության վարչության հայտարարագրման բաժնի գլխավոր մասնագետի (պաշտոնի ծածկագիր՝ 41-27.1-Մ1-5) թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի հարցազրույցն անցկացնող հանձնաժողովի 2021 թվականի սեպտեմբերի 17-ի եզրակացությունը և Արսեն Բոխյանի դիմումը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Արսեն Յուրիկի Բոխյանին նշանակել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի հայտարարագրերի վերլուծության վարչության հայտարարագրման բաժնի գլխավոր մասնագետի (պաշտոնի ծածկագիր՝ 41-27.1-Մ1-5) պաշտոնին:

2. Փորձաշրջանի ընթացքում Արսեն Բոխյանի փորձաշրջանի համակարգող նշանակել բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրությունների իրականացման վարչության պետ (ծածկագիր՝ 41-27.6-Ղ3-1)՝ Մարիաննա Բաղինյանին:

3. Արսեն Բոխյանի պաշտոնային դրույքաչափը սահմանել «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:

4. Աշխատանքի անցնելու սկիզբը՝ 2021 թվականի սեպտեմբերի 27:

Recoverable Signature

X

ՍՏԵՓԱՆ ԴԱՎԹՅԱՆ

Signed by: DAVTYAN STEPAN 3809890715

Ս.ԴԱՎԹՅԱՆ